ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> 05 2015 թվական N 95-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՈՂՋԻԻ, ԼԵՌՆԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի՝ <<2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> N 27-Ա որոշման 1-ին կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքի ղեկավարի և Ողջիի, Լեռնագյուղի համայնքների ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2015 թվականի սեպտեմբերի 13-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, Հայաստանի Հանրապետության թիվ թիվ 33 և 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, Մարալիկի, Ողջիի, Լեռնագյուղի համայնքների ղեկավարներին:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է